

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը 2013/2014 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համար հետևյալ մասնագիտությունների և մասնագիտացումների գծով հայտարարում է բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելություն

Բակալավրի կրթական ծրագիր

Աղյուսակ 1.1

Շիֆր	Մասնագիտություն	Քննություններ			Տեղ	Ուսման վարձ /դրամ/
		Մրցույթային				
1	2	3			4	5
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
080200	Կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	80	450.000
	այդ թվում՝ մասնագիտացումներ.					
080201	Պետական և մունիցիպալ կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	450.000
080202	Հակաճգնաժամային կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	450.000
080203	Զբոսաշրջության կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	450.000
080300	Ֆինանսներ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	80	450.000
	այդ թվում՝ մասնագիտացումներ.					
080301	Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	450.000
080302	Մաքսային գործ,	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	450.000
080305	Բանկային գործ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	450.000
080400	Կոմերցիա	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	40	350.000
	այդ թվում՝ մասնագիտացում.					
080401	Բիզնեսի կազմակերպում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
080500	Վիճակագրություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (րստ ճյուղերի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
080700	Միջազգային տնտեսական հարաբերություններ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	400.000
080800	Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
080900	Աշխատանքի տնտեսագիտություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081000	Բնօգտագործման տնտեսագիտություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081100	Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081200	Հողագույքային հարաբերություններ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081300	Կառավարման տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081400	Ապահովագրական գործ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	400.000
081500	Հաշվապահական հաշվառում (րստ ճյուղերի),	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	40	400.000
	այդ թվում՝ մասնագիտացում.					
081501	Աուդիտ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	400.000
081601	Պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081602	Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081700	Շուկայաբանություն (մարքեթինգ)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	400.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				520	

ՀՊՏՀ ԳԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2013/2014 ՈՒՐԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ

Աղյուսակ 1.2

Շիֆր	Մասնագիտություն	Քննություններ			Տեղ	Ուսման վարձ /դրամ/
		Մրցույթային				
1	2	3			4	5
080300	Ֆինանսներ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	25	380.000
080400	Կոմերցիա (այդ թվում՝ բիզնեսի կազմակերպում)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	350.000
081500	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի),	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	25	380.000
	ԸՆԴԱՍԵՆԸ				70	

ՀՊՏՀ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2013/2014 ՈՒՐԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ

Աղյուսակ 1.3

Շիֆր	Մասնագիտություն	Քննություններ			Տեղ	Ուսման վարձ /դրամ/
		Մրցույթային				
1	2	3			4	5
080200	Կառավարում	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	300.000
080300	Ֆինանսներ	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	20	300.000
	ԸՆԴԱՍԵՆԸ				40	

Բակալավրիատի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2013թ. օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ:

Դիմումի հետ ներկայացվում են.

ա/ միջնակարգ կրթության վկայականը (ատեստատը), միջին մասնագիտական և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),

բ/ 6 լուսանկար (3x4սմ չափսի),

գ/ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),

դ/ զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք՝ ժամկետային զինվորական ծառայությունն անցնելու մասին,

ե/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև զինծառայող ծնողի զոհվելու մասին, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),

զ/ միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ), դիպլոմները,

է/ 2013, ինչպես նաև 2012 թվականի «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզու)» և «Մաթեմատիկա» առարկաների ավարտական միասնական քննությունների վկայագիր՝ դրանց առկայության դեպքում:

Դիմորդները կարող են պահպանել 2013թ. «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզու)» և «Մաթեմատիկա» առարկաների միջնակարգ լրիվ ընդհանուր կրթական ծրագիր իրականացնող հաստատության միասնական քննության և 2013թ. միասնական համակարգով հանձնած քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ: Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով նաև 2013թ. (20122.) միասնական համակարգով հանձնած քննական առարկայի (առարկաներից) գնահատականները, տվյալ առարկայից (առարկաներից) հանձնել քննություն:

Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:

2013թ. «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզու)» և «Մաթեմատիկա» առարկաներից միասնական քննություն չհանձնած կամ վերահանձնել ցանկացող դիմորդները քննություն են հանձնում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ այդ առարկաների միասնական քննություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Քննություններն անց են կացվում 2013 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 13-ը: Ուսանողների հրամանագրումը կատարվում է մինչև հոկտեմբերի 25-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման տևողությունը հինգ տարի է:
 Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՊՏՀ-ի ընդունող հանձնաժողովից:
 Մեր հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 128, հեռ. 59-34-73:

Մագիստրատուրայի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2013թ. օգոստոսի 12-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ:

Մագիստրոսի կրթական ծրագիր
 Աղյուսակ 2.1

Մասնագ. ծածկագիր	Մասնագիտության անվանումը	Տեղերը	Ուսման վարձ (դրամ)
1	2	3	4
080200	Կառավարում	70	

	այդ թվում՝ մասնագիտացումներ.		
080201	Պետական և մունիցիպալ կառավարում	20	470.000
080205	Գործարար կառավարում	20	470.000
080206	Նախագծերի կառավարում	15	470.000
080207	Սոցիալական կառավարում	15	470.000
080300	Ֆինանսներ	80	
	այդ թվում՝ մասնագիտացումներ.		
080301	Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում	15	470.000
080302	Մաքսային գործ	15	470.000
080305	Բանկային գործ	20	470.000
080306	Հանրային ֆինանսներ	15	470.000
080307	Կորպորատիվ ֆինանսներ	15	470.000
080400	Կոմերցիա		
	այդ թվում՝ մասնագիտացում.		
080401	Բիզնեսի կազմակերպում	20	400.000
080700	Միջազգային տնտեսական հարաբերություններ	30	
	այդ թվում՝ մասնագիտացումներ.		
080701	Արտաքին առևտրային քաղաքականություն	15	420.000
080702	Միջազգային արժույթաֆինանսական հարաբերություններ	15	420.000
081300	Կառավարման տեղեկատվական համակարգեր	40	
	այդ թվում՝ մասնագիտացումներ.		
081301	Էլեկտրոնային կառավարում	20	400.000
081302	Էլեկտրոնային բիզնես	20	400.000
081400	Ապահովագրական գործ	20	420.000
081500	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	40	420.000
	այդ թվում՝ մասնագիտացում.		
081501	Աուդիտ	20	420.000
081700	Շուկայաբանություն (մարքեթինգ)	30	
	այդ թվում՝ մասնագիտացումներ.		
081701	Մարքեթինգային հետազոտություններ	15	420.000
081702	Մարքեթինգային հաղորդակցություններ	15	420.000
	ԸՆԴԱՄԵՆԸ	330	

ՀՊՏՀ ԳԳՅՈՒՄԻՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2013/2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՆՑ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ /ՎՃԱՐՈՎԻ/ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ

Աղյուսակ 2.2

Մասնագ. ծածկագիր	Մասնագիտության անվանումը	Տեղերը	Ուսման վարձ (դրամ)
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>
080300	Ֆինանսներ	20	420.000
081500	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ (այդ թվում՝ աուդիտ)	20	400.000
	ԸՆԴԱՄԵՆԸ	40	

Մրցութային հիմունքներով հեռակա ուսուցման մագիստրատուրա կարող են ընդունվել այն անձինք, ովքեր հաջողությամբ ավարտել են բարձրագույն կրթության նախորդ լրիվ ծրագրով ուսուցումը համապատասխան կամ հարակից մասնագիտության գծով, և ունեն բակալավրի որակավորման աստիճան, ինչպես նաև նրանք, ովքեր ունեն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճան:

Հեռակա ուսուցմամբ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով՝ «առանց տարկետման իրավունքի» կարգավիճակով:

1. Հեռակա ուսուցման մագիստրատուրայում ուսման տևողությունը երկուսուկես տարի է:
2. Ընդունելությունն անցկացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի:
3. Ընդունելությանը կարող են մասնակցել ոչ միայն ՀՊՏՀ դիպլոմավորված մասնագետի և բակալավրի, այլև պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի տնտեսագիտական, ճարտարագիտական, ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների, ինչպես նաև իրավագիտության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության գծով մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կամ բակալավրի դիպլոմ ունեցող շրջանավարտները և այլ մասնագիտությունների այն շրջանավարտները, ովքեր աշխատում են տնտեսագիտական մասնագիտությամբ:
4. «Կառավարում», «Ֆինանսներ», «Կոմերցիա», «Բիզնեսի կազմակերպում», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Ապահովագրական գործ», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի)» և «Մարքեթինգ» մասնագիտություններով մագիստրատուրա ընդունվելու համար ՀՊՏՀ հարակից մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտները և դիպլոմավորված մասնագետները, ինչպես նաև այլ բուհերից դիմածները հանձնում են շեմային քննություն համապատասխանաբար՝ «Մենեջմենթի հիմունքներ», «Ֆինանսներ և վարկ», «Կոմերցիա», «Բիզնեսի կազմակերպում և պլանավորում», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Կառավարման տեղեկատվական համակարգեր», «Ապահովագրական գործ», «Հաշվապահական հաշվառում» և «Մարքեթինգ» առարկաներից,
5. Շեմային քննությունից դրական գնահատական ստանալու դեպքում դիմորդը իրավունք է ստանում մասնակցելու մագիստրատուրայի ընդունելության մրցույթին:

6. ՀՊՏՀ շրջանավարտներն իրենց մասնագիտություններով մագիստրատուրա ընդունվում են առանց շեմային քննության:

7. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անց է կացվում ըստ՝

- նախորդ ուսումնառության արդյունքում շնորհված դիպլոմի հավելվածի գնահատականների միջինի,
- մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականի,
- հրատարակած կամ հրատարակության երաշխավորված գիտական աշխատանքների առկայության,
- ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականի,
- շեմային քննության գնահատականի:

8. Պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի մագիստրոսի կամ բակալավրի դիպլոմ ունեցող քաղաքացիների գործերն ընդունվում են 2013թ. օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 25-ը, ուսման վարձի վճարման թույլտվության հրամանագրումը՝ մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 13-ը:

Պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի մագիստրոսի կամ բակալավրի դիպլոմ ունեցող քաղաքացիները ներկայացնում են.

ա/ դիմում,

բ/ բուհի կողմից տրված դիպլոմի և առաջադիմության թերթիկի պատճենները,

գ/ անձնական թերթիկ,

դ/ երեք լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

ե/ աշխատող քաղաքացիները՝ տեղեկանք աշխատանքի վայրից:

Փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 593-473:

Ռ Ե Կ Տ Ո Ր Ա Տ

